ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

31.01.2019թ.

2019թ. Հունվարի 31-ին ժամը՝ 15.00-ին Նոր Արտագերս համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողովը:

Ժողովին մասնակցում էին համանքապետարանի աշխատակազմը, ավագանու անդամներ, բուժ. ամբուլատորիայի և դպրոցի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, ինչպես նաև մարզպետարանի աշխատակից Գևորգ Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ 2018թ ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
2. 2018թ. Համայնքի բյուջեի ծախսային մասի վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար՝ Խ. ՋԱՆԱՋՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գ. Նոր Արտագերս 31,01,2019թ.

Հարգելի համայնքի բնակիչներ, հյուրեր, պարոն Գևորգյան, այսօր Ձեր ներկայությամբ քննարկման կներկայացնեմ Նոր Արտագերսի գյուղապետի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքները:

Գյուղապետարանը՝ համայնքի ղեկավարը իր գործունեությունն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն և իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ:

Նոր Արտագերսի համայնքն իրենից ներկայացնում է 640 առանձին տնտեսություն, որի բնակչության թիվը կազմում է 1779 մարդ, ընտրողների թիվը կազմում է 1246, վարչական տարածքը կազմում է ընդամենը 674,5 հա, որից գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ 589.3հա: 2018 թվականին մշակվել է 450.3հա:

Համայնքում հիմնականում զբաղվում են բոստան- բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ և խաղողագործությամբ, ինչպես նաև պտղաբուծությամբ:

ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ՝

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները: Գույքահարկի գանձումը տարեկան կտրվածքով նախատեսվել է 6200.0 հազար դրամ, փաստացի կատարվել է 3039.8 հազար դրամ, ընդամենը – 49.0% : Հողի հարկի տարեկան նախատեսված 11183.0 հազար դրամ, կատարվել է 4255.8 հազար դրամ, ընդամենը-38.1 %-ով:

Պլանով նախատեսված այլ եկամուտները- 3976.0 հազար դրամ, փաստացի կատարվել է 1974.3հազար դրամ, ընդամենը 49.7%- ով:Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100%, տարեկան կատարողականը 2018 թվականի դրությամբ կազմում է 62.6%:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այս բնագավառում համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը.

1. կազմակերպում և կառավարում է համայնքի ենթակայության «ԲԱ» ՀՈԱԿ-ի, գրադարանի գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները,
2. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումները,
3. դպրոցն ընդունվելու կապակցությամբ 1-ին դասարանի երեխաներին նվիրել է դպրոցական պայուսակներ՝գրենական անհրաժեշտ պարագաներով, ինչպես նաև դպրոցի շրջանավարտների համար, դպրոցն ավարտելու կապակցությամբ, կազմակերպել է միջոցառում, տրվել է նվեր՝ դրամի սեսքով,
4. տրամադրում է դրամաշնորհներ համայնքում գործող բուժ. ամբուլատորիային և նախակրթարանին:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեկավարը պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1. կազմակերպվել է համայնքում զինապարտի հասակի երիտասարդների հավաքագրում տարեկան զորահավաքին,
2. բանակի օրվա՝ հունվարի 28-ի, կապակցությամբ կազմակերպել է միջոցառում,
3. Հանրապետության տոնի առթիվ մայիսի 28-ին կազմակերպել է միջոցառում,
4. Սեպտեմբերի 21-ը, անկախության տոնի առիթով մեծ շուքով կազմակերպվել է միջոցառում և այն աջակցում է բնակչությանը՝ հատկապես երիտասարդությանն ռազմահայրենասիրական դաստիարակչությանը:
5. 2018 թվականի ընթացքում համայնքում մահացածների շիրիմների համար գնել է ծաղկեպսակներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեկավարն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները, և իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունը.

1. նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքները
2. միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեակավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1. կատարում է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործում, դրանց շինարարություն և վերանորոգում:
2. կատարում է համայնքի տարածքում ընտանի կենդանիների և թռչունների ամենամյա հաշվառում
3. կազմակերպում է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն, հակահամաճարակային միջոցառումներ՝ կենդանիների հիվանդությունների կանխման, և այլ աշխատանքներ,
4. աջակցել է գյուղ. մթերքների աշխատանքների իրականացմանը, աջակցել եմ, որպեսզի բնակիչները իրենց իսկ հավաքած բերքը իրացնեն թե շուկաներում և թե իրացման կետերում և գործարաններում,
5. հաշվառել, և վիճակագրական վարչություն է ներկայացրել տարեկան հաշվետվությունը:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ղեակավարը կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1. կազմակերպել է կենտրոնական ճանապարհների և կից առուների մաքրում
2. ամենամյա կտրվածքով կազմակերպում է աղբաթափման աշխատանքներ,
3. բարեկարգել է համայնքի միջհամայնքային ճանապարհները / ավազապատում/ և այլ գյուղամիջյան փողոց:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Համայնքի ղեակավահո սույն բնագավառներում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1. մշտապես հետևում և աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը
2. աջակցում է առողջապահական, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ոռոգման ներտնտեսային ցանցը շուրջ 2 կմ տարածքով վերակառուցման անհրաժեշտություն ունի,
2. խմելու ջրացանցը վաղուց հիմնովին վերանորոգելու կարիք ունի. այդ ուղղությամբ ըստ 2018թ. սուբվենցիայի ծրագրի շրջանակներում և համայնքի միջոցներով 2019թ. ընթացքում կատարվելու են համապատասխան աշխատանքներ
3. Համայնքապետարանի շենքի վերանորոգում
4. Մանկապարտեզի շենքի հիմանորոգում:
5. Մշակույթի տան հիմնանորոգում:
6. Մատուռի կառուցում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Ջանազյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԿԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ համայնքի 2018թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 17383.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 7295.7 հազար դրամ կամ կատարվել է 42.0 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 11183.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 4255.8 հազար դրամ կամ կատարվել է 38.1 %-ով:

2, Շենքերի և շինությունների գույքահարկի պլանով նախատեսված 700.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 27.1հազար դրամ կամ կատարվել է 3.9 %-ով:

3, Փոխադրամիջոցների գույքահարկի պլանով նախատեսված 5500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 3012.8 հազար դրամ կամ կատարվել է 54.8 %-ով:

4.Տեղական տուրքերի պլանով նախատեսված 304.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 50.0 հազար դրամ կամ կատարվել է 16.4 %-ով:
:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 3976.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1974.3 հազար դրամ կամ կատարվել է 49.7 %-ով, այդ թվում՝

1.գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով

նախատեսված 1000.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 942.8 հազար դրամ կամ կատարվել է 94.3 %-ով:

այլ գույքի վարձակալության գծով նախատեսված 480.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 400.0 հազար դրամ կամ կատարվել է 83.3 % -ով :

2. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով

նախատեսված 1750.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 308.7 հազար դրամ կամ կատարվել է 17.6 %-ով:

4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 36041.4 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 26691.4 հազար դրամ կամ կատարվել է 74.1 %-ով, այդ թվում՝
պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 26691.4 հազ. դրամի դիմաց փաստացի տրամադրվել 26691.4 հազ. դրամի չափով, կամ կատարվել է 100,0% ով, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) 9350.0 հազ. դրամի չափով դեռևս չի տրամադրվել է:

Նոր Արտագերս համայնքի 2018թ. վարչական բյուջեով նախատեսված 57400.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 35961.3 հազար դրամ կամ կատարվել է 62.6 %-ով:

Նոր Արտագերս համայնքի 2018թ. սեփական եկամուտները նախատեսված 21359.0 հազար դրամի դիմաց կազմել է 9269.9 հազար դրամ կամ կատարվել է 43.4 %-ով:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Նոր Արտագերս համայնքի 2018 թվականի վարչական բյուջեով նախատեսված 48050.4 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 35664.9 հազ. դրամ, կամ կատարվել է 74.2%-ով:

Վարչական բյուջեով նախատեսված ծախսերը բաշխվում են՝

1. Նոր Արտագերս համայնքի 2018թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 29384.4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 25594.9 հազար դրամ կամ կատարվել է 87.1 %-ով, այդ թվում՝

ա) տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 27650.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 24741.0 հազար դրամ կամ կատարվել է 89.5 %-ով:

բ) ընդհանուր բնույթի այլ ծախսեր 01բաժին 3 խումբ 3 դասով նախատեսված 200.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 124.8հազ. դրամ կամ կատարվել է 62.4 %- ով,

գ) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 01բաժին 6 խումբ 1դասով նախատեսված 1534.4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 729.1 հազար դրամ կամ կատարվել է 51.6 %-ով:

2.Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակարգման

1. 04բաժին 5 խումբ 1դասով նախատեսված 1450.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 750.0 հազար դրամ կամ կատարվել 51.7 %-ով:

3.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 1խումբ 1դասով նախատեսված 2616.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1376.4 հազար դրամ կամ կատարվել է 52.6 %-ով:

4.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ծախսերի գործառնական դասակարգման 06բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 7300.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 4326.0 հազար դրամ կամ կատարվել է 59.3 %-ով: , այդ թվում՝ ջրամատակարարում՝ 06-3-1, որի գծով նախատեսված 7300.0 հազ. դրամ, փաստացի

ծախսվել է 4326.0 հազ. դրամ կամ կատարվել է 59.3% -ով:

5.Առողջապահություն ծախսերի գործառնական դասակարգման 07 բաժին 6 խումբ 2 դասով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %- ով

6.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2550 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2368.4 հազար դրամ կամ կատարվել է 92.9 %-ով, այդ թվում՝

ա/ գրադարանային ծառայություններ՝ 08բաժին 02 խումբ 1դասով նախատեսված 1350.0 հազ. դրամից փաստացի ծախսվել է 1309.0 հազ. դրամ կամ կատարվել է 97% -ով,

բ/ այլ մշակութային կազմակերպություններ՝ 08բաժին 02 խումբ 4դասով նախատեսված 1000.0 հազ. դրամից փաստացի ծախսվել է 999375.0 հազ. դրամ կամ կատարվել է 99.9 % -ով,

գ/ արվեստ՝ 08բաժին 02 խումբ 5դասով նախատեսված 150.0 հազ. դրամից փաստացի ծախսվել է 60.0 հազ. դրամ կամ կատարվել է 40 % -ով,

դ/ հեռուստահաղորդումներ՝ 08բաժին 03 խումբ 1 դասով նախատեսված 50.0 հազ. դրամից փաստացի ծախս չի կատարվել:

7.Կրթություն ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժին 8խումբ ,1 դասով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է 100 %- ով

7. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2050.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է 4.9 %-ով:

8. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսվել է հատկացում 2500,0 հազ. դրամ, որից փաստացի կատատարվել է ծախս 949.2 հազ. դրամ կամ կատարվել է 38 % -ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

1. Նոր Արտագերս համայնքի 2018թ. բյուջեի Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 11850.0հազ. դրամ, փաստացի ծախսվել է 949.2հազ. դրամ կամ կատարվել է 8.0% -ով, այդ թվում՝ 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 5100.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1007.0 հազար դրամ կամ կատարվել է 19.7 %-ով:

ա) տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 4300.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 699.0 հազար դրամ կամ կատարվել է 16.3 %-ով:
բ) ընդհանուր բնույթի հանրային 01բաժին 6 խումբ 1դասով նախատեսված 800.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս 308.0 հազ. դրամ կամ կատարվել է 38.5%- ով:

2. Տնտեսական հարաբերություններ 04բաժին 9 խումբ 1դասով նախատեսված -6650.0 հազ. դրամից փաստացի կատարվել է ծախս -251.8 հազ. դրամ կամ կատարվել է 3.8 %- ով:
3. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն ծախսերի գործառնական դասակարգման 06բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 12000.0 հազար դրամ ֆոնդային ծախսի դիմաց փաստացի ծախսը կազմել է 194.0 հազար դրամ կամ կատարվել է 1.6 %-ով:
4. Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 40.0 հազար դրամ ֆոնդային ծախսի դիմաց ծախսը կազմել է 40.0 հազար դրամ կամ կատարվել է 100. %-ով:

2018թ. բյուջեի բյուջեով նախատեսված 57400.4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 35664.9 հազար դրամ կամ կատարվել է 62.1%-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ

Նոր Արտագերս համայնքի բյուջեի տարեվերջի պակասորդը (դիֆիցիտը) նախատեսված 296.5 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 296.5 հազար դրամ:

Համայնքապետարանի ղեկավար՝ Խ. Ձանազյան